կողմանս, որք չէին հնազանդեալ իշխանութեան տեառն իւրեանց. մին յԵրուսաղէմ աւերեցին զտաճարն Ս. Յարութեան, կործանեցին նաեւ զվանս Լատինաց 'ի Բեթղեհէմ, որպէս գրէ Արաբացի պատմիչն. եւ յետ այնորիկ յարձակեցան 'ի Պաղեստինայս, ուր եհաս նոցա եւ նա ինքն Փնտուղտար, բայց չկարացին տիրել քաղաքին, այլ միայն քակեցին զաշտարակս արտաքոյ նորին։ Առին զԿեսարիա Պաղեստինոյ և զԱրսուֆ, և դարձան յԵգիպտոս։

Եւ յետ երկուց ամաց (1265) դարձեալ ել բազմութեամբ Եգիպտական զօրաց. էառ զԱֆէթ և զայլ տեղիս, երդուեալ առաջի նոցա չառնել վնաս ինչ ումեք 'ի մարդկանէ. իսկ անձնատուր լինել նոցա՝ դրժեալ երդմանն, կոտորեաց զնոսա անխնայ 'ի բերան սրոյ. և յաջորդ ամին (1266) դէմ ետ դնալ մեծաւ պատրաստութեամբ 'ի Դամասկոս, և հասեալ 'ի քաղաքն Յոպպէացւոց, էառ զնա 'ի ձեռաց Լատին իշխանաց եւ աւերեաց, զոր այն ինչ նորոգեալ էր թագաւորն Գաղղիոյ Ս. Լուդովիկոս, որպէս գրեցաք 'ի նախընթաց գլուխն։ Էառ նա զքաղաքն Անտիոք, ուր նստէին տակաւին իշխանք Լատինացւոց, և 'ի սուր մաչեաց զբնակիչս նորին։ Զօրքն աւարասէր մին յաշխարհն Կիլիկիոյ։ Տարաբաղդ արքայորդին Լեւոն՝ յետ գերութեանն հրամանաւ Սուլթանին եկն շղթայիւք և զինուորօք յուխտ յԵրուսաղէմ, և շրջեալ 'ի անօրինական Ս. Տեղիս աղօթիւք և խնդրուածովք մխիթարեցաւ 'ի հոգի իւր, և անդրէն դարձաւ 'ի բանտն Գահիրէի։

Լեւոն Բ. որդի Հիթմոյ Ա. արքային Հայոց, կին նորա Կեռան թագուհի, դուստր Հիթմոյ, Տէր դղեկին Լամբրունի, և եղբօր Ներսիսի Լամբրունեցւոյ, որ 'ի բանտին կրօնաւորեալ կոչեցաւ Հեղի, և առանձնացաւ 'ի վանս Դրազարկու։ Լեւոն Բ. թագաւորեաց 1271. յերկրորդ ամի թագաւորութեան նորին՝ միաբանք Ակներ վանաց նուիրեն նմա այն սքանչելի Աւետարանն, գրեալ 'ի մագաղաթի ոսկետառ և հրաշագեղ պատկերօք։ Յետուստ կողմանէ ունի ընդարձակ յիշատակարան, յիշելով զաղդատոհմն թագաւորին, թագուհւոյն, եւ Ներսիսի Լամբրունեցւոյ։ Եւ ապա սքանչելի պատկերք թագաւորին, թագուհւոյն, որդւոց և դստերաց նոցին։ Սոքա ոչ Սարգիս պիծակի և